Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15 նոյեմբերի 2023թ. ք. Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ Գլխավոր տնօրեն Էդուարդ Մարտիրոսյանս ծանոթանալով «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-41/23» ծածկագրով գնման ընթացակարգին

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար խեժի (կատիոնիտ) ձեռք բերման նպատակով 2023 թվականի սեպտեմբերի 27-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-41/23» ծածկագրով գնման ընթացակարգի թիվ 1 չափաբաժնի համար գնահատող հանձնաժողովի թիվ 3 որոշմամբ ընտրված մասնակից է ճանաչվել Ա/Ձ Աղաբաբյան Լյովան (այսուհետ՝ Մասնակից): Պայմանագրի նախագիծը՝ ուղեկցող գրությամբ, 2023 թվականի հոկտեմբերի 24-ին ուղարկվել է Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեին:

Գնումների մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն պայմանագրի և (կամ) որակավորման ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել որակավորման և պայմանագրի ապահովումը: Ա/Ձ Աղաբաբյան Լյովան սահմանված ժամկետում չի ներկայացրել իր կողմից ստորագրված պայմանագիրը, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետի, այն է՝ որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելու իրավունքից, և 37-րդ հոդվածի 4-րդ կետի, այն է՝ պայմանագիր չի կնքվում, պահանջներով «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-41/23» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն, անգործության ժամկետի կիրառմամբ:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ա/Ձ Աղաբաբյան Լյովային ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակվելու օրվանից:

3. Որոշումը կայացնելու հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին՝ Ա/Ձ Աղաբաբյան Լյովային:

Գլխավոր տնօրեն՝ **Է. Մարտիրոսյան**